ՀԱՍՄԻԿ ՍԱՅՍՈՒՐՅԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԹԵՄԱՆ ՔՅՈՓԵՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

20-րդ դարի Գերմանիայի պատմաքաղաքական դրությունը լի էր արյունալի իրադարձություններով: Եթե պատերազմի ավարտից, նացիզմի տապալումից հետո դաշնակից երկրների որոշումով Գերմանիային արգելված էր սեփական բանակ ունենալ, ապա հետագա տարիների ընթացքում աշխարհի հզոր պետությունների միջև ծագած անհամաձայնության, շահերի բախման արդյունքում ռազմաքաղաքական, ուժային բևեռները էական փոփոխության ենթարկվեցին: Արևմուտքը, ինչպես նաև Արևմտյան Գերմանիան ոչ մի կերպ չէին ցանկանում համակերպվել երկրի մասնատման փաստի հետ և ձգտում էին ամեն գնով հասնել երկրի վերամիավորմանը: Այս ձգտումը բերեց նրան, որ արևմտաեվրոպական պետություններն ու մասնավորապես Ամերիկան այլևս դեմ էին Արևմտագերմանական բանակի վերականգնմանը, քանզի այս երկիրը դարձել էր իրենց նոր դաշնակիցը: Սակայն երկրի ներսում կային փոքրաթիվ ուժեր, ովքեր դեմ էին ԳՖՀ-ի միլիտարիզացիային՝ նացիոնալ-սոցիալիստների իշխանության գալուն: Սակայն նույն արևմտյան կապիտալի շնորհիվ Գերմանիան դարձավ հզոր ռազմական տերություն:

Երկրորդ համաշխարհային պատերազմը խոր հետք թողեց համաշխարհային գրականության վրա: Մասնավորապես, 50-60թթ գրված ստեղծագործությունները լի էին պատերազմին նվիրված թեմաներով: Գերմանացի գրողների ստեղծագործությունների հիմանական թեման դարձավ պատերազմը:

Յուրաքանչյուր ստեղծագործություն կամ վեպ լիովին ընկալելու համար հարկավոր է վերլուծել տվյալ ստեղծագործության կառուցվածքային առանձնահատկությունները: Թեմատիկ վերլուծությունները օգնում են ընթերցողին հասկանալ և գնահատել վեպը:

Վոլֆգանգ Քյոփենի ստեղծագործական եռուն շրջանը սկսվում է 50-ականներից: Առաջինը, որը լուրջ հաջողություն ունեցավ «Աղավնիները խոտերի մեջ» ստեղծագործությունն էր: Գրաքննադատները տարակարծիք էին նրա վեպերի վերաբերյալ: Որոշ գրաքննադատներ գնահատում էին Քյոփենի ոճը, քանի որ համարում էին նրան Ջոյսի և Ֆոլկների հետնորդ, սակայն վեպի թեման նրանց դուր չէր գալիս: Նրանք համարում էին, որ վեպը չի համապատասխանում նոր դարաշրջանի հետ[1]: «Նա էպիկական շարադրանքը միավորում է

[1] Bungter, Georg. ÜÜber Wolfgang Koeppens Tauben im Gras., In: Über Wolfgang Koeppen, hrsg. Ulrich Greiner (Frankfurt: Suhrkamp, 1976), S. 195

ներքին մենախոսության հետ, երկխոսությունը անուղղակի խոսքի, գեղարվեստական հյուսվածքին է ընդելուզում իրական փաստաթղթեր»,- գրում էին գրաքննադատները[2]:

Անդրադառնալով բուն թեմային, նշենք, որ Քյոփենը իր ստեղծագործություններում ընդգծում է ավերիչ պատերազմի հետևանքները, ահազանգում մարդկությանը: Նա նշում է, որ մարդ արարածը հասարակական շերտերի բարքերի, ավանդույթների կրողն է: Գրողը պատկերում է մի աշխարհ, որը լի է կեղծիքով ու ստով: Եվ այս ամենի պատճառը և սկզբնաղբյուրը պատերազմն է: Նրա գրեթե բոլոր ստեղծագործությունները ունեն ընդգծված քաղաքական ուղղվածություն: Սակայն սա ամենևին չի նշանակում, որ դրանք զուրկ են գեղարվեստական տարրերից: Նա ժամանակի համայնապատկերը ներկայացնում է հնարավորինս անկողմնակալ: Մի առիթով Քյոփենը գրում է.«Ես կցանկանայի տեսնել գերմանական մեծ ժողովրդավարությունը՝ խաղաղասեր, այլ ոչ ռազմականացված Գերմանիա»[3]:

Չնայած իր ստեղծագործություններում Քյոփենը բարձրացնում է պատերազմի թեման և նրա վեպերը ողողված են պատերազմի տեսարաններով, այնուամենայնիվ նա պարզորոշ ցույց է տալիս, որ Գերմանիայի պառակտման և պատերազմ սկսելու մեջ մեղավոր են հենց իրենք գերմանացիները: Նա մեղադրում է այն գերմանացիներին, ովքեր 1933-ին միացան նացիոնալ-սոցիալիստներին և պառակտեցին գերմանական հասարակությունը: «Աղավնիները խոտերի մոջ» վեպի բազմաթիվ դրվագներում թելի նման ձգվում է այս գաղափարը: Քյոփենի այս վեպը համարվում է այլաբանական վեպ: Ներթափանցելով այլաբանության մեջ հասկանալի է դառնում, որ աղավնիները հենց այն գերմանացիներն են, ովքեր վստահեցին նացիոնալ-սոցիալիստների բարձրագոչ հայտարարություններին և դարձան քաղաքականության զոհեր: Քյոփենի մտահոգությունը տեղին էր, քանի որ նրա կարծիքով նոր գերմանացի սերունդը կրկին դաստիարկվում էր նույն ոգով: Պատերազմի տարիներին, նացիոնալ- սոցիալիստների տիրապետության օրոք շարքային գերմանացին գտնվում էր անելանելի վիճակում, նրանք զոհ էին ազգայնամոլության:

Հիմքում դնելով պատերազմի թեման՝ գրողը ստեղծել է հրաշալի գեղարվեստական ստեղծագործություններ, որոնք մինչև այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը, քանի որ ինչպես կարծում է Քյոփենը պատմությունը կրկնվում է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո. «Պատմությունն

---

[2] В.Стерженский; А.Черная, Литературная борьба в ФРГ (Поиски, противоречия, проблемы), М., "Советский писатель," 1985, стр.50

[3] K.Linder, Auswahlbibliographie zu Wolfgang Koeppen,- Text+Kritik , H 34, 1972, S. 97

անցած ժամանակ է, սակայն այն օրեցօր շարժվում է առաջ և սա նշանակում է, որ յուրաքանչյուրս այնտեղ մասնակից ենք եղել»[4]:

Չնայած Քյոփենը իր վեպերը սկսել է գրել 50-ականներից սկսած, երբ արդեն վաղուց ավարտվել էր պատերազմը, սակայն գրողի գիտակցության մեջ ներկան պատկերված է որպես անցյալի շարունակություն: Պատերազմը անցյալ է, բայց շարունակում են ապրել մարդիկ, ովքեր հրահրեցին այդ պատերազմը և նրանք այլ գաղափարախոսության կրողներ են: Պատերազմի տարիներին մի ամբողջ ժողովուրդ կանգնած էր բարոյահոգեբանական և գաղափարական պառակտման եզրին: Գրողը համարում էր, որ պատերազմը արհավիրք է և այդ արհավիրքին դիմակայելու համար հարկավոր էր մեծ ուժ ու կամք:

Վերլուծելով գրողի հերոսների ներաշխարհը, հասկանալի է, որ պատերազմական իրադրության մեջ հայտնված ժողովուրդը չէր կարող իր տեսակետը հայտնել, ծայն բարձրացնել անարդարության և դաժանության դեմ, հակառակ դեպքում նրանք կանգնելու էին երկընտրանքի առաջ՝ գնալ ռազմաճակատ զոհվել, կամ հրաժարվել ծառայությունից և գնդակահարվել որպես դավաճան: Սակայն Քյոփենն իր ստեղծագործություններում գտնում է մի երրորդ ուղի, այն է՝ դեմ դուրս գալ նացիոնալ-սոցիալիստներին, բայց դա անել գաղտնի և աննկատ, իր ստեղծագործությունների ու վեպերի միջոցով:

Պատերազմը Քյոփենի հերոսների աչքերով յուրովի է պատկերվում: Համաձայնելով, որ աշխարհը լի է բարոյազուրկ, ատելությամբ համակված ազգայնամոլներով, Քյոփենի հերոսները բախվելով աշխարհում տիրող իրականության հետ, այնուամենայնիվ, գտնում են իրենց երջանկությունը:

Հետպատերազմյան Գերմանիայի քաղաքական կյանքի մասին պատմելուն զուգահեռ Քյոփենը խոսում է նաև «հրաշքի» մասին: Երկիրը աստիճանաբար դուրս է գալիս փլատակների տակից, ամենուրեք եռուզեռ է՝ կառուցվում են նոր շենքեր, նոր գործարաններ, վերանորոգվում են հները: Այս փոփոխությունները առավել նկատելի են հենց Բոնում, որի կենտրոնական փողոցներով անցնելիս ամեն քայլափոխի հանդիպում ես շքեղ խանութների, որոնց ցուցափեղկերը կքվել են ամենազանազան ապրանքների ծանրության տակ՝ սառնարաններ, հագուստ, կահույք, ժամացույցներ, ռադիոընդունիչներ, ավտոմեքենաներ ու վառարաններ՝ ամեն ինչ հասարակության համար[5]:

Վեպերը գրելիս Վոլֆգանգ Քյոփենը պատերազմի թեմային ինքնանպատակ չի անդրադարձել: Նրա վեպերը ահազանգ են անցյալի և խորհրդանիշ ներկայի ու ապագայի: Հեղինակը վեպում տեղի ունեցող իրադարձությունները ներկայացնում է որպես օրգանական շարունակությունն այն պատմության, որն

---

[4] Wolfgang Koeppen, Tauben in Gras, München, 1951, S.31
[5] Wolfgang Koeppen: Das Treibhaus, München, Hans Schwabfelisch, 1953, p.102

իր մեջ կրում է «հավերժական» Հռոմ քաղաքը: Դեպքի վայրի ճիշտ ընտրությունը հեղինակին թույլ է տալիս նաև հիշեցնել, որ նացիոնալ-սոցիալիզմը ոչ միայն գերմանացիներին բնորոշ, այլ համամարդկային մեծագույն արատ է, քանզի հենց այստեղ, Հռոմում էր գտնվում նացիզմի գլխավոր օջախներից մեկը, որը ղեկավարում էր իտալական նացիստների պարագլուխ Մուսոլինին:

Քյոփենի այս հնարքն ունի ևս մեկ, ոչ պակաս, իսկ միգուցե առավել կարևոր նշանակություն՝ դրա շնորհիվ իրար դեմ դիմաց են հայտնվում քաղաքակիրթ Եվրոպայի երկու՝ թե՛ դրական և թե՛ բացասական իմաստով մեծագույն ծեռքբերումները՝ քրիստոնեությունը և նացիզմը: Նույն քաղաքում իրար կողքկողքի գոյատևում են թե՛ «սրբության-սրբոց» Վատիկանը, և թե՛ նացիստական Գերմանիան, ավելին, Վատիկանի քարե պարիսպները թույլ են տալիս, որպեսզի մարդկության հոգևոր ժառանգությունը՝ քրիստոնեությունը «նյութականանա», իսկ երկու հազար տարվա պատմությունը կենդանանա ու խտանա մեկ խորհրդանշական կառուցվածքի մեջ, ինչպես որ նացիոնալ-սոցիալիզմն է կենտրոնանում Հռոմի կենտրոնական հրապարակի պատկերում, հրապարակ, որտեղից իր մարդատյաց գաղափարները Մուսոլինին տարածում էր ողջ Իտալիայով և ամբողջ աշխարհով մեկ:

Միաժամանակ «Աղավնիները խոտերի մեջ» վեպի վերջին դրվագներում ավելի պարզորոշ է դառնում, որ Յուդեյանի կերպարը նացիստի հավաքական կերպարի ծաղրապատկերն է: Իր այս հնարքով Քյոփենն ամենևին չի ուզում ասել, թե պատերազմի տարիներին նացիստ հանցագործների գործած ոճիրների մասին պատմական փաստերը չափազանցված են, ամենևին, հեղինակն իր հերոսի մասին խոսելիս երբեք չի մոռանում նշել, որ նա դահիճ է: Քյոփենն այս հնարքով ընդամենը փաստում է, որ Յուդեյանի պես անձինք ընդամենը կատարողներ էին, իսկ պատերազմի մեջ առավել շատ մեղավոր էին նրանք, ովքեր հրամաններ էին տալիս դահիճներին և նրանք, ովքեր, ինչպես նացիոնալ-սոցիալիզմի բռնատիրության տարիներին, այնպես էլ այժմ, գերմանացիների մեջ ատելություն են սերմանում այլ ազգերի և, հատկապես, հրեաների հանդեպ, գլխավոր մեղավորը ոչ թե նացիստ մարդասպաններն են, այլ նացիոնալ-սոցիալիզմի գաղափարակիրներն ու նրանց համակիրները, այդ թվում նաև՝ կաթոլիկ եկեղեցին: Այս շեշտադրումն առավել ցայտուն է դառնում վեպի համատեքստում և պատահական չէ, որ հաճախ Քյոփենի բացասական հերոսի և դրական հերոս Զիգֆրիդ Պֆաֆրատի հայացքները՝ աշխարհի անցյալի, ներկայի ու ապագայի, ինչպես և եկեղեցու վերաբերյալ՝ համընկնում են:

Քյոփենի գրող-հերոսների ահազանգերը և կոչերը հնչում են որպես «ծայն բարբառոյ յանապատի»:Գրողի՝ որպես «ազգի խղճի», միայնակությունն է, որ ընկած է Քյոփենի հերոսների հուսալքությունն հիմքում: Սրանով է բացատրվում այն դառը հեգնանքը և գրոտեսկը, որ առկա է հեղինակի վեպերում: